ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

25.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/62

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 25.05.2018թ. թիվ 03/26-3/9435-18 գրությամբ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 23.05.2018թ. թիվ 18-99 գրության հիման վրա, 25.05.2018թ. «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 23.05.2018թ. թիվ 18-99 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«25.04.2018թ. «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների armeps.am համակարգի միջոցով ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով հայտարարել է ավտոպահեստամասերի գնման մրցույթ գնանշման հարցումով: Հայտերի բացումը և գնահատումը տեղի է ունեցել գնումների armeps.am համակարգի միջոցով 02.05.2018թ.: ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն:

04.05.2018թ. ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով կատարվել է հարցում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

Վերոնշյալ հարցման պատասխանը ստացվել է 15.05.2018թ., նույն օրը գումարվել է նիստ, որտեղ կայացվել է որոշում մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել՝ առաջարկելով «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին ներկայացնել լրացուցիչ տեղեկանք, վերջինիս կողմից այն ներկայացվել է 17.05.2018թ. որտեղ կրկին հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՝ 30.04.2018թ. արտացոլված են եղել հարկային պարտավորություններ:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ Տաթև Ջիվալյանը:

3. **<u>«Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 25.05.2018թ. գրությամբ դիմել է «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.05.2018թ. թիվ 03/26-3/9435-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել

Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գեորգի Գրիգորյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/62 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 25.05.2018թ. թիվ 03/26-3/9435-18 գրությունը, «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 23.05.2018թ. թիվ 18-99 գրությունը և կից փաստաթղթերը, ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 04.05.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2,15.05.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3 և 17.05.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.05.2018թ. տրված եզրակացությունը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 20.06.2018թ. կայացրած թիվ ՍՑ-ԱՄ-2018/64 և թիվ ՍՑ-ԱՄ-2018/71 որոշումները.

«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/11

ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 04.05.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի՝

- 1-ին ենթակետով որոշել է Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 4-րդ և 23-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին:

- 3-րդ ենթակետով որոշել է՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել մասնակցի հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.05.2018թ. տրամադրած եզրացության համաձայն «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 9.427.008 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 15.05.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով որոշել է նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել, քանի որ 15.05.2018թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու (30.04.2018թ.) օրվա դրությամբ ունի ժամետանց հարկային պարտավորություն, նույն արձանագրությամբ որոշել է առաջարկել «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին ներկայացնել անհրաժեշտ տեղեկանքներ (եթե կա անհամաձայնություն տեղեկանքում առկա տեղեկատվության հետ):

Հանձնաժողովը 17.05.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով որոշել է մերժել «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի հայտը, քանի որ 30.04.2018թ. դրությամբ ներկայացված տեղեկանքում արտացոլված է «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու (30.04.2018թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն 2018 թվականի ապրիլի 8-ին, 15-ին և 28-ին taxservice.am էլեկտրոնային համակարգի միջոցով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե է ներկայացրել համապատասխան 2.241.873 (երկու

միլիոն երկու հարյուր քառասունմեկ հազար ութ հարյուր յոթանասուներեք), 12.854.208 (տասներկու միլիոն ութ հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր ութ), 25.219.066 (քսանհինգ միլիոն երկու հարյուր տասնինը հազար վաթսունվեց) դրամ կազմող ներմուծման հարկային հայտարարագրեր, ինչի արդյունքում, ըստ առաջնահերթության գոյացել է հարկային պարտավորություններ: Մինչդեռ, 16.04.2018թ. «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե է ներկայացրել 2017 թվականի համար ռեզիդենտների շահութահարկի հաշվարկ, որում շահութահարկի գումարը կազմել է 13.674.670 (տասներեք միլիոն վեց հարյուր յոթանասունչորս հազար վեց հարյուր յոթանասուն) դրամ: Համաձայն շահութահարկի մասին օրենքի, նշված շահութահարկի գումարի և կատարված կանխավճարների դրական տարբերությունը բյուջե պետք է վճարվի հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 25-ը, առաջացած դրական տարբերությունը ընկերությունը նշված ժամկետում վճարել է բյուջե: Արդյունքում, օրենսգրքի 325-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն հարկային պարտավորությունները մարվել են ըստ ավելի վաղ առաջացած հարկային պարտավորության հերթականության, սակայն համաձայն օրենսգրքի 78-րդ և 99-րդ հոդվածների Ընկերությունը իրավունք ուներ ԵՏՄ անդամ պետություններից ապրիլ ամսվա ընթացքում ներմուծված ապրանքների մասով 40 315 147 (քառասուն միլիոն երեք հարյուր տասնհինգ հազար մեկ հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամի հարկային պարտավորությունը վճարել մինչև սույն թվականի մայիսի 20-ը ներառյալ, բայց, քանի որ միասնական հաշվով առաջնահերթության սկզբունքով մարվել է (ավտոմատ) ավելի վաղ առաջացած հարկային պարտավորությունները, հետևաբար 26.04.2018թ. դրությամբ առաջացել է 9.511.358 (ինը միլիոն հինգ հարյուր տասնմեկ հազար երեք հարյուր հիսունութ) ՀՀ դրամի ապառք, որը Ընկերությունը մարել է 2018 թվականի մայիսի 20-ին ըստ սահմանված կարգի:

Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ապահովող taxservice.am էլեկտրոնային կայքի՝ էլեկտրոնային համակարգի հարկային պարտավորությունների քարտի վարման ընթացակարգը ի հասու չէր Ընկերության կողմից դիտման, որի մասին Ընկերությունը բազմիցս ահազանգել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համապատասխան ծառայություններին: Ընկերություն նշեց նաև, որ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն հանդիսանում է պարտաճանաչ

հարկատու և ժամանակին վճարում է օրենքով սահմանված հարկերը և վճարները: Մասնավորապես, ապրիլ ամսվա համար Ընկերությունը ունեցել է ընդհանուր առմամբ 70.103.739 (յոթանասուն միլիոն մեկ հարյուր երեք հազար յոթ հարյուր երեսունինը) ՀՀ դրամի չափով հարկային և մաքսային պարտավորություններ, որից ԵՏՄ ներմուծման հայտարարագրերով՝ 40.337.417 (քառասուն միլիոն երեք հարյուր երեսունյոթ հազար չորս հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ, մաքսային հայտարարագրերով՝ 20.960.733 (քսան միլիոն ինը հարյուր վաթսուն հազար յոթ հարյուր երեսուներեք) ՀՀ դրամ և որպես հարկային այլ պարտավորություններ՝ 8.805.589 (ութ միլիոն ութ հարյուր հինգ հազար հինգ հարյուր ութսունինը) ՀՀ դրամ, որոնք վճարվել են ըստ օրենքի համապատասխան հարկատեսակով սահմանված ժամկետներում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված

տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին

• 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամա¬դրում է հարցման մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձ Մ. Անանյանի թիվ ՍՑ-ԱՄ-2018/64 և թիվ ՍՑ-ԱՄ-2018/71 ծածկագրերով ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին 04.06.2018թ. թիվ ԳԲԽ-ԱՄ/1/9969 գրությամբ· կատարված հարցմանն ի

պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով, 2018 թվականի հունվարի 1-ից սկսած, միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով վճարումները կատարում են միասնական հաշվին: Հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետները սահմանված են օրենսգրքի համապատասխան բաժիններով, իսկ հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման կարգը՝ օրենսգրքի 319-րդ հոդվածով: Հարկային պարտավորությունների մարման կարգը սահմանված է օրենսգրքի 325-րդ հոդվածով, իսկ վերջինիս վերաբերող անցումային հարկային հարաբերությունների կարգավորումները՝ օրենսգրքի 456-րդ հոդվածով: Վերոնշյալ կարգավորումների ծրագրային ապահովման ներդրումը կրում է պիլոտային բնույթ, ուստի անհարժեշտ է հաշվի առնել 2018 թվականի հունվարի 1-ից հարկային պարտավորությունների և դեբետային գումարների հաշվառման ու հարկային պարտավորությունների մարման նոր կարգին հարկ վճարողների իրազեկված չլինելու հանգամանքը»:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.05.2018թ. տրամադրված եզրակացության՝ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 9.427.008 ՀՀ դրամ գումարի չափով:

Բողոքներ քննող անձը հաշվի առնելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Բողոքներ քննող անձ Մ. Անանյանի գրությանն ի պատասխան ուղղված 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրությունը, գտնում է, որ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ն ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորությունը, քանի որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 14.06.2018թ. թիվ 01/6.1/32927-18 գրության մեջ մատնանշված պատճառներով, առկա է Ընկերության իրազեկված չլինելու հետևանքով ժամկետանց հարկային պարտավորություն ածանագրվելու իրավիճակը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.05.2018թ. թիվ 03/26-3/9435-18 գրությամբ «Հույս-Մոտոր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ